

կաւարն կքարոզէ Սոբէ խաչիս: Օհնի
Վահանայն կաղօթէ Որք Վերայն և
լաւաւիւնսն: և ի վերջանայն՝ կհամբու-
րեն նորակաւսնքը, և կերզուի շարական
Որ անպէս և անխնայն: Յետոյ Սոբէ խաչիս
կքարոզէ սարկաւագն, և քահանայն կա-
սէ Պահպանիչ, և Հայր Վեր:

Ըստ այսմ կվերջանայ Վերջոյ խոր-
հուրդը:

(Շարունակել):

ՊԱՆԴԱՐԱՐԱՆ ԳԱՐԴԱՐԱՆ ԿԱՆՈՆԱՆԻՆ:

ՊԱՏՄԱԿԱՆ

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ

(Շարունակել):

Գլխի Գ.

Ճանապարհորդութիւն ի Կախիթ. — Աւանդութիւն Օծայերին. —
Որով եղանակաւ պատարտեան զգին ի կողմանս. — Զերին աղ-
բիւր. — Աւանդութիւն. — Ամբոց Սուրբոյ. — Քնեազ Արթուրոյ.
— Դիտողութիւն ի վերայ Սվանթի. — Երթ ի վանս Ս. Դուռնայ.
— Աւանդութիւն. — Եկեղեցին. — Արդիւնք Քանանայից. — Դարմ ի
Տփլիս. — Երթ ի Հարաւորս. — Քարաւանայից զիւր Հացոց. —
Դիտողութիւնք զբնակաց կողմանց Վանականայ. — Հայոց մեկը
նւ թուրաց թէ. — Ծով Գեղամայ. — Աւանդութիւնք զԿանկրա-
մուրայ. — Արարտ. — Երեւան. — Ի՞նչ ուստի էստ զայս անո՞ճ.
— Վաճառանոցն Երեւանայ. — Զրանքը եւ առուք:

ԶԿախիթէ ասէին ինձ լինել էլ զորստն 47)
Պովկասու, երկիր՝ ուր հոսի կաթն և մեղր և գի-
նի. ուր գտանին պտուղք ամենակերպ բարու-
թեանց. ուստի եղի ի մօտ տեսանել զկողմանս:
Վասն որոյ ի 10 Օգոստոսի ի գիշերային պահու
առեալ ընդ իս գիշերանն Լիլլին, և զմօտերմն իմ
զՊետրոս Ննյ, ուղղեցաք զընթացս մեր ի Կա-

խիթ. և յերրորդ ժամու մուտ կալաք ի Մարի-
նոֆելց առանն գաղթականացն Գերմանացոց,
որ անկանի առ զետօնն Յորի, այն է Վանիւս,
առեալ զանունն ի Սիւրուէ, ի պատիւ հօր նո-
րա*): Կացեալ աստանօր մինչև ցեօթն ժամ ա-
ռաւօտու, փոխեցաք զուղի մեր ի ձախակողմն. և
չըջեալ լերանց ի լերինս հասաք ի լեռն մի, ա-
նուանեալ «Օձալեռն», ուստի առիթս առեալ
Պետրոս Ննյ, պատմեաց մեզ զաւանդութիւն
ինչ ի վերայ այլոյ «Օձալերին»:

Օձալեռն եւ Երեւան:

Առ Երասխաւ ի հարաւակողմն Նախիջևանի
անկանի լեռն, անուանեալ ի Տաճկաց «Իլան-
դաղը», և ի Հայոց «Օձաստ», — օձալեռն — 48):
Ի ժամանակս ինչ տարւոյն ժողովին անդանօր
անհամար բազմութիւն օձից մինչև անհնարին լի-
նել մարդկան և կենդանեաց մատչիլ ի նա. թող
զսովորականն Գտանին անդ և տեսակք երկիւ-
ղալի և վնասակար սողնոց: Օձ ինչ, եթէ ցհա-
սանին 25 ամաց եկաց մնաց անտես ի մարդկա-
նէ, առնու զզօրութիւն կերպարանափոխութեան,
այն է կարէ փոխիլ ի կենդանիս և ըն. որով պատ-
րեալ և որսացեալ զմարդիկ սպանանէ զնոսա. և
եթէ հասանէ ցլաթմնամեայ հասակ, դարձեալ
անտես ի մարդկանէ, անուանի ըստ Պարսից
«Իւրի», (տարածումն). իսկ թէ ցեօթանասնա-
մեայն, յայնժամ ըստ հաճոյից առնու զկերպա-
րանս մարդոյ և անասնոյ. — Դէպ լինի երիտա-
սարդ հոգուի ուրումն անջատիլ ի թափառական
բազմութեանցն և մնալ ի շրջակայս նորա. տա-
րուբեր ի յոյզս խորհրդոց մտաց ընթանայ յայս-
կոյս և յայնկոյս, և տեսանէ ի մեջ թփոց զօ-
րիորդ չքնաղատեսիլ զի լայ և հնծէ դառնապէս.
և հարցեալ՝ պատմէ թէ յետս կացեալ յազգա-

(*) Կուր գետ եւ էստ զանունն ի Սիւրուէ արքային Պար-
սիւր, վերջ զայս գիտ ի ժամանակս Եարդեհայ կոչէին Եւս-
բաճման նայն անուն, զոր Պարսիկք Պարսից ասային Սիւրա-
հոսի: Զեդ:

(47) Կէդրատա բառ Սպաներէն և նշանակէ «սակեցօժեղ»:
անուամբս այսու կոչի երեսակայեալ երկիրն հարաւային Ամերի-
կայի. որ լի է երբ թէ սակոյ և սակմբ պատուականք:

(48) Լեռան, զորմէ բանքը են արդոյ ճանապարհորդին,
հետի է յերասխայ երբ երեք ժամու ճանապարհ. զորմէ տես-
ցես ի մերս զնախնայ հայրենեայ երեւանիս:

կանացն, ոչ ևս կարէ գտանել զհայրենիս իւր: Քի՞նք ապա հոգիսն առնու նստուցանէ ընդ իւր ի ձի առ ի ածել ի ցանկացեալ տեղին. այլ ի ճանապարհին սէր կապէ մին ի միւսն, և յայնժամ խոստովանի աղօթիկն, թէ չիք իմ ոչ հայրենիք, և ոչ հայրենակիցք, միայն զայս արարի ասէ առ ի որսալ զքեզ, վասն զի ընդ առաջին և եթ ահա արկեալ ի քեզ՝ սիրեցի զքեզ. ուստի տանէ զնա հոգիսն ի տուն իւր, և ամուսնանայ ընդ նմա:

Կայ առ նա յաւուր միում Քաբիր ոմն Հրնդկացի, որոյ ունելով ի ձեռին զմատանի՝ յորոյ վերայ էր եղեգնաքար, զիտաց անդէն թէ կինն այն է օձ կերպարանափոխ, վասն զի եղեգնաքարն խափանէ զկերպարանափոխութիւն մերձակայ իրին. յայտնեաց առն զիրան, և ի հաւատարիմ կացուցանել զբանս իւր, ասէ ցնա, «պատուէր տուր կնոջդ պատրաստել զսիրեցեալն իւր կերակուր և զաղտ ի նմանէ արկ ի նա աղ առաւել յոյժ, ապա ամրափակեալ զգրուեն հեղ զըուր ի մէջ տան, և ցոյց զքեզ իբր ի խոր քուն լինել,» Երար այրն ըստ բանի նորա, և ի զիշերի տեսանէ զի ահա յարեալ կինն ի խնդիր ջրոյ և չգտեալ ինչ, արտաքս եհան զգլուխ իւր յըմպել անտի. զայս տեսեալ առն զիմէ ի միւս օրն առ Քաբիրն խնդրել ի նմանէ հնարս կորուսանելոյ զնա. իսկ նա խորհուրդ տայ նմա, զի պատուիրեսցէ կնոջն թրեղ զհաց, և յորժամ խոնարհեսցի ասէ կինն ի թոնիր առ ի կողել զգունդ խմորոյն, արկ զնա ի բորբոքեալ հուրն, փականս զբերան նորա քարիւ և մի բնաւ հաներ անտի, ոչ ի ձիւ նորա և ոչ ի պաղատանս զթացեալ. ապա թէ ոչ՝ կորուսցէ զքեզ, Եորժամ արար այրն զայս ամենայն, աղաչէր կինն զի հանցէ զնա. «զթա՛ ասէ՛ ի հաւատարիմ՝ ամուսին քո,» այլ իբրեւ ոչ լուաւ, կրկնեաց, Քաբիրն որ ծարաւի է արեան իմոյ, մերկացաւ քեզ զգաղտնիս իմ. իմ իսկ կորուսեալ էր զքեզ, թէ գիտէի յայտնի եղև քեզ իրքն. Եւստ մահու նորա ժողովեաց Քաբիրն զփոշի մարմնոյ նորա առ ի փոխել նովա զմատաղս յոսկի. զի ասի թէ՛ զոյ ի նմա զօրութիւն ինչ այսպիսի. իսկ այրն՝ որ յանշափս սիրէր զկինն, յայնմ օրէ անմխի-

թար և յուսաբեկ, ծածկեցաւ յամբոխէ մարդկան:

Լուաք զի Հայք ասնն թէ՛ օձք ոչ երբէք երևին Եւրոպացոց. և դարձեալ՝ իբր թէ Եսկէնտէր (մեծն Աղէքսանդր) բնակեցոյց զկանայս իւր ի վերայ լերինս այսմիկ, և թովեալ օձք տեղոյն զգուշանան պահպանութեան նոցին:

Աւանդութիւն ինչ լուաք և ի լինելս մեր ի Պախէթ, մերձ ի զիւրն Գուրկան. էր փոքրիկ բոլորաշրջան լիճ մի. ջուր նորա պղտոր և ի միշտ յուզման ի պատճառս յորդահոս բղխման աղբերն ջերմաջրոյ, որ կայր ի միջակետի նորա. և ասնն թէ էր յառաջագոյն ի տեղւոյն լճին տուն շահամու և վատթարաբարոյ քահանայի ուրումն. որ զայթակղութիւն լինէր ժողովրդեանն ոչ միայն յաւուրս կիւրակէից և այլոց տէրունական տօնից ի մարմնաւոր աշխատութիւնս կալով, այլ և զայլս ի նոյն հարկելով:

Ըստ այսմ և մինչ յաւուր այլակերպութեան Տեառն աղայր զցորեան, մերձենայ առ նա Փրկիչն և հարցանէ. «զի՞նչ է օրս այս,» և քահանայն ոչ կարացեալ ճանաչել զնա, ի ձայն բարձր գոչեաց. «քեզ զի՞ փոյթ, այլակերպութեան Տեառն է այս օր,» Եայժամ դարձաւ անտի Փրկիչն, և անդէն յական քթթել ընկուզաւ յանդունդս տունն և որք կային ի նա. յայնմ օրէ ոչ որ ետես զնա կամ զընտանիս նորա, և ի տեղւոյն՝ յորում տունն էր, այս լիճ ի յայտ եկն, և հոսեցին աղբուրք ջերմին ջրոց, որք են արտասուք օրինազանց քահանային և ընտանեաց նորա:

Ի մէջ բերեմք և զայլ ինչ աւանդութիւնս, զոր պատմեցին մեզ բնակիչք երկրիս, այլ մեր անձամբ ոչ գտաք ի տեղւոյն, զորմէ բանդ է ըստորեգիալ:

«Ի հարաւակողմն Արաստանի է Սուրամ առնուն աւանն. և ունի զհինօրեայ ամրոց, որ ասի թէ շինեցաւ ի Փարսաճանայ երկերիւր ամօք նախ քան զՔրիստոս. էր սա յառաջագոյն ընդ տիրապետութեամբ իշխանի միոյ, որ էր զօգջիր անկախ և բազում անգամ վրդովէր զանդորբութիւն թագաւորացն երկրին. ի հարաւային արեւելեան մասին ամրոցին բարձրացեալ կայ պարիսպ ամրաշէն կառուցեալ ի վերայ ահուկելի խո-

րոց, մի ի տիրապետող իշխանացն ջան ի գործարար կանգնել զայս պարիսպ կարևոր ի պահպանութիւն տեղւոյն. այլ ամենայն աշխատութիւն նորա ի դերե ել, զի որչափ շինէր ի տունջեան, յանդունդս զլորէր ի դիշերին. Եհարց յայնժամ ցկանարդ ոմն Պարսիկ զպատճառս իրացն, և նա խորհուրդ տայ դնել կենդանւոյն ի ներքոյ հիմանն դմիակ որդի այրի կնոջ ուրումն, զի հաստատուն կացցէ շինուածն. ի խնդիր եղեալ գտին վաղվադակի զմանուկ ոմն և ի վերայ նորա կանգնեցին զպարիսպն, որ միշտ եկաց մնաց խոնաւ ի յորդարուղիս արտասուաց անբաղդ մօրն. գոյ և երգ ինչ ժողովրդական, յորում ի մէջ բերեալ է վերջին զօրոց մօրն ընդ որդւոյն (զօհրապոյ). «Ողջ ես տակաւին, որդեակ իմ սիրելի», — «Եւ ի մայր իմ, թաղեցին զիս մինչև ցծունկս», — նոյն հարցումն «Ողջ ես տակաւին, որդեակ իմ», — «Եւ ի մայր իմ ծածկեցին զիս ցմէջս իմ», — հարցումն դարձեալ, «Եւ ի մայր իմ, ծածկեցին զիս ցկուրծըս. — ցպարանոցս», — և յետ այնորիկ վերջին շունչ նորա «Եւ աղ մայր իմ, ծածկեցայ իսպառ», —

Ծանկալի է յայժ ժողովել զաւանդութիւնս կողմանցս ի համեմատել ընդ Աւրուպացւոց աւանդութեանց.

Լուռք ի ծանօթից մերոց և զեղանակ պատրաստութեան զինւոյ կողմանցս Կովկասու, եղանակ անյարմար և անպէտ, այս ինքն է զի զխաղողն ամենայն խառն ի միասին, սեաւն և սպիտակն, հասունացեալն և խակակուծն ժողովեալ ի մի վայր արորն ոտիք մինչև քամեալ իջանէ զինին ի փոս քառանկիւնի (հնձան) փորեալ և պատրաստեալ յատկապէս ի նոյն պէտտ, յորոց են մեծ և փոքունք. փոքունք պարունակեն ոչ աւելի քան զտասն սափոր զինի, իսկ մեծք մինչև ցհարիւրաւոր սափորս. յորժամ լցեալ լինի հընձանն փակեն դանցս նորա և մնայ մինչև յերկուս կամ ցերիս ամիսս. յետ այնորիկ անտի առեալ ընուն յայլ անօթս դարձեալ թաղեալս ի հող, որոց բերանք մնան բաց. և հող, ջուր, տիղմն, և միջառք անկանին ի զինիս. իսկ յորժամ առնուկ կամին զզինին ի պէտտ ինքեանց կամ ի վաճառ, ընուն ի տիկս, որք պատրաստին սովորաբար ի

մորթոց եղին, խողի, և այծու, դարտաբին երեսն ի ներքս դարձուցեալ, օծանեն նափթիւ, յորս զինին առնու առանձին իմն և ազդու ճաշակ, բայց պահպանի անվնաս, Եիշք և տակառք ոչ տեսանին ի նոսա.

Գաղթականք Գերմանացւոց պատրաստն զգինին ըստ Եւրոպական կերպի. մեծաւ ջանիք որոշն նախ զխաղողն ի տեսակս տեսակս, զմեղեալ հիւծն ընուն ի կիսատակառ, թողեալ մինչ ցառաջին եռացումն, յետ այնորիկ ընուն ի տակառս. յամենայն տեղիս ի կողմանսս կարօտին անօթոց զինւոյ. իսկ Գերմանացի գաղթականք ինքեանք պատրաստն զամենատեսակ անօթս. դտանին սակաւուք միայն շիշք շամպանեայ զինւոյ, որք բերեալ լինին ի Ռուսիոյ, և վաճառին հարիւրն 15 Ր. արծ. ուստի և քան զզինին ծանրագին. զի ազնիւ զինին Կախէթի վաճառի, մի չափն, (զօման) սովորաբար երեք քոփեկս Վիրք անհմուտք զօրով մշակութեան այգւոյ, առնուն զինի զօ. ի միոյ օրավար գետնոյ եթէ արգասաւոր է հողն, 350 սափոր, եթէ անարգասաւոր է 260. իսկ գաղթականք առ ջանադիր և խելամուտ հօկողութեան իւրեանց, մինչև ց600 սափոր, և ևս Որթ խաղողոյ տեւէ աստանօր մինչև ցհարիւր ամն. լուազոյն զինին Կախէթի գնմանութիւն տայ զինեաց Բուրգոնի և Սպանիոյ. զինի երկրիս մինչև ցայս վայր չէանց ի Ռուսաստան կամ յօտար սահմանս. միայն Վիրք և գաղթականք նոր ի նորոյ սկիզբն արարին վաճառել. Հայք ոչ վաճառեն զզինի, և Վահմետականք խորշին ի նմանէ ըստ կրօնականին.

Ի Թելախ և ի Սղուաղ գաւառս Կախէթու բաց յերկուց քաղաքացն համարին 115 գիւղք և տունք ի նոսա 14 253. յորս են, եկեղեցիք Վերաց՝ 170, Հայոց՝ 12.

Են գեօղք, որք բաղկանան ի 20 կամ 30 տանց. և են որ ի չորս հարիւրոց — Անտի դէմ եղեալ եկաք ի Գուրկան, և ի Գուրկանայ ի Սըղնախ, հիւրոյթ կալեալ ի տան կողմնապետին իշխանին Արխաղեան (Արխաղով), որ էր այր հանձարեղ և սիրող լուսաւորութեան. կին նորա՝ զուստր իշխանին Սվամեթաց. ըստ պատմելոյ սորա ոչ մի երկիր ի սահմանս Կովկասու կարէ

այնչափ առաւել մատակարարել ճանապարհորդին տեղեկութիւնս հնազանդականս, որպէս Սվամետ. ժանաւանդ հետաքրքրական ճարտարագետական շինուածովքն, որք վերաբերին ամենայն ժամանակաց:

Պատմութիւնն լռէ թէ և ըստ մեծի մասին զերդմանցս Վովկասեան երկրի, այլ անհամար ճարտարագետական շինուածք ցուցանեն զյառաջադիմութիւն, և զըւսաւորութիւն երկրին յարուեստս և ի դիտութիւնս ի հին ժամանակս. և մարթ է ասել թէ սակաւութ միայն պակաս քան զեւրոպացիսն հանդիսանային սրբա ի միջին դարս — Եւդ են եկեղեցիք բազումք, զորք միջին դարուց կիսաւերք. որք ըստ աւանդութեան Արխաղաց և Սվամետաց կառուցան ի Զենուկաց. ընդ անուամբս Զենուկայ, պարտիք իմանալ զԳենուկացիս, որք ի միջին դարս ըստ մասին ինչ իշխէին կողմանցն արեւելեան ափանց Սեաւ ծովու, կամ զէթ ազդեցութիւն նոցա տարածիր ի վերայ երկրին. թուի թէ Գենուկացիք գուն զործեալ են տարածել զդաւանութիւն Հռովմէական եկեղեցւոյն ի մէջ հիմանոսաց, որպէս յայտ առնեն շինուածք եկեղեցեաց ըստ ձեռք նոցա. ընդ հովանեաւ և պաշտպանութեամբ նոցա Քրանկիսեան կրօնաւորք զեղան յամենայն կողմանս Վովկասու 49). յամի 1833, հաստատեցին զարքեպիսկոպոսութիւն ի Թաման, և եպիսկոպոսութիւն ի Լուկուկ, և ի Շիլ, և որպէս երեւի, ջան եղեալ են նաեւ ի միութիւն եկեղեցւոյն Արաց ընդ Պապականին, այլ անօգուտ թէ սոցին և թէ ջան պատրիարքին Արաց Անտոնիոյ առաջնոյ ի թաղաւորութեան Հերակլեայ, որ աքսորեցաւ յաթոռոյ պատրիարքութեան սակաւ պայտիսի դիտաւորութեան. և եկաց այնուհետեւ յառանձնութեան տուեալ զանձն յուսմունս և յընթերցմունս:

Յայտ իսկ է ապաքէն, թէ հնութիւնք Գենուկացւոց ամբաս կարեն մատակարարել նիւթս վերաբերեալս ի պատմութիւն և ի սոցմագրութիւն կողմանցն և ազանցն Վովկասու, և հիւսիսային փոքուն Եսիոյ, այլ ո՞վ փոյթ յանձնին կա-

լու ի լոյս հանել զպոստիկ հարստութիւնս պատուականս: Յայտսիկ կողմանս ամենայն ուրեք են շինութիւնք անհամարք, զորս աւանդութիւն բնակչացն Գենուկացն տայ. Գենուկացիք ունէին յարաբերութիւնս ընդ ամենայն սահմանս Խրիմու, Վովկասու, փոքուն Եսիոյ, ի Տրապիզոնէ ցՊերա. և ի խորս Եսիոյ՝ ցՊարսս. նոցա զրեն անհամար զգեակք, կամուրջք, և կարուանոցք. զօ. ամիոցն Հասան - Ղալէ, ընդ նմին կամուրջն որ ընդ Երասխ. իսկ անտի երկու ժամու հոռի գտանի նշանաւոր կամուրջն, Վամուրջ Հովուտց ասացեալ (2որան — քեօիրիւ) ի վերայ եօթն գեղեցեալէն կամարաց. և զայն Գարէհի Աշտասպետց 50) տան, Յաղաղս Սվամետաց պատմի հետեալ աւանդութիւնդ:

Եաղոն (ասի) ի յափշտակել զոսկի գեղմն ի նեղ էտրի զարբայն Արաց Փառնարաս. և նատու ի զերծանել ի ձեռաց նորա խոյս ետ գնաց ի Սվամետ, իբրեւ յանմատչելի և յաներկիւղ տեղի. սակաւաւոր ժողովուրդ տեղւոյն հնազանդեցաւ նմա, և նա շինեաց անդանօր ամրոցս բազումս, որոց աւերակք են ցայսօր ժամանակի, և ի նոսա բնակեցոյց զիշխանս Արաց, այլ վերջինքս տակաւ առ տակաւ խառնեցան ընդ բնիկ տեղացիս և անհետացան. լեղու Սվամետաց միանգամայն առանձին և օտար է յամենայն լեզուաց Վովկասեան բնակչաց: Ըստ բառիցն, ըստ արտասանութեան և ըն, միայն թուական անուանք Արացեբէն են:

Սվամետք են կապուտակն և շիկահեր. քաղք և գեղեցիկք, անարգութիւն կամ վնաս առ սոսա մենամարտութեամբ փոխարինեալ լինի, և արեան վրէժխնդրութիւն գտանի ի նոսա յամենայն ուրեք. բաղմանութիւնն ներկի է, այլ թողուլ զկին կամ կնոջ զայր աններկի. գնոյ առնուն զկանայս, բայց բազում անգամ այն է զի փախուցանեն, ըստ որում անկարողք լինին հատուցանել ըստ զխոյ նոցա 60) և մինչև ան-

(49) Անիմն է միանգամայն ասել թէ Քրանկիսեան ընկերութիւն մեզ զործեաց յամենայն ի սահմանս Վովկասու:

(50) Գարե՛ն որդի Հնատասպեայ կամ Աշտասպեայ, յետ Վամբիւսայ որդւոյ Արաբոի Թագաւորէ Պարսից, որ կոչեցաւ նաեւ Արտաշէս Իւ Պոյն իրան է որ ետաւ ի կնաթիւն վրէժիւր զուսոր հօրեղբոր Մաքքիւրի:

զամ 80 կոմ. վաճառ տղայոց և աղջկանց սովորական ինչ է ի սոսա. որք տարեկաք լինին նախ առ 2ևրքեղս, ապա ի նոցունց ի Կ. Պօլիս. զին երեկտակ միոյ յերկք հարիւր լուրջոյ ց400, իսկ աղջկանն կէս զինս Սլավեաք որք դարձան ի քրքիստոնէութիւն ի ձեռն թաղու հոյն Վրաց Թաւմարայ, զրեթէ անուամբ միայն են քրիստոնեայք, չունին զքահանայս և ինչ եկեղեցական արարողութիւնս. ժողովին միայն ի մէջ աւերակաց յաղօթօյ և սօվորաբար առաջի պատկերի, զորս յարգեն, այլ առ ի չգոյէ քահանայից, նս առ սոսա ազգ ինչ սրբանուէր պաշտօնէից անուանեալք Կեկեանազ, որք ունին ակնարկութիւն ի վերայ եկեղեցեաց. աղօթս առնեն ի լուր ժողովրդոց յանուն սրբոյ Երրորդութեան, օրհնեն զպսակ ամուսնացելոց, և թաղեն զմեռեալս. ժողովուրդ նոցա առնու զերդումն առաջի պատկերաց ի ներկայութեան Կեկեանազաց, պահեն և զպահս Ասի թէ երկիր նոցա անառիկ և անմատչելի է և պրտազարեր յոյժ, ունի և զբոլս ոսկւոյ, արծաթոյ, այլ ոչ այնչափ յայտնի եղեալ կամ ի կիր առեալք են:

Իշխանն Արիտաղով պատմեաց մեղ թէ ամօք ինչ յառաջ տեսեալ է ի սահմանս Ախայցիոյ զեկեղեցի փոքրիկ գեղեցկաշէն և ամբողջ, շինեալ ի Թամարայ թաղուհոյն, որպէս ցուցանէր արձանադրութիւն նորա. նոյն այս իշխան այնդէր թէ Փառնարաս արքայ Վրաց եղիտ զայժմեան եկեղեցական տառս նոցա. կամ գէթ ի կիրառութիւն էած զնոսա 170 ամօք յառաջ քան զմեծն Աղէքսանդր, որով լեղու Վրաց ստացաւ յարգ յայտնի կողմանս. և եղև կիրառական Իսկ մինչ ցայն վայր խօսէին ի բազմաձայն լեզուս 31):

Պատմարանական ստուգութիւնն է արդեօք, թէ աւանդութիւն միայն:

Յետ ճաշու առեալ սորա տարաւ զիս ի վանս օրբուհոյն Նունեայ (նինս թու մինդայ) կէս ժամու և եթ հետի ի Սղնախոյ, Պատմութիւնն ցուցանէ թէ սուրբն Նունի ի ժամանակս մեծին Պոստանդիանոսի 1314 ամէ ց318 ամն զառաջինն

քարոզեաց զքրիստոնէութիւն ի Վիրս, կառոյց զյիշատակեալ վանս զայս, և հաստատեաց եկեղեցի. եկեղեցին Վրաց կատարէ զյիշատակ Ս. Նունեայ ի 14 Յունուարի. ի տօնինորա ամի երգինչ յօրինեալ ի պատիւ նորա, որ ի պատմութիւն ակնարկէ ելանելոյ օրբուհոյն ի Հոսովմայ յերուսաղէմ, անտի ի Վիրս ի քարոզութիւն քրիստոնէութեան. աւանդութիւնն ասէ թէ էր արքուհին Նունի մերձաւոր արեւնակից մեծ նահապակին օրբոյն Գէորգայ. ունէր ի ձեռին խաչ յորթոց խաղողոյ կապելոց ընդ միմեանս հերովք զըլխոյ նորա, որով մեծամեծ նշանս առնէր. այս խաչ պահպանիւր զգուշութեամբ ի սերունդս թագաւորացն Վրաց, իսկ յամի 1720, իրբև խաղացին ի Վիրս տաճիկք, Պարսիք և Լեզգիք, փոխադրեցաւ ի լերինս յեկեղեցի գեղջն Անալիայ. անտի լսեալ զնա մետրապօլիտն Վրաց, առաքեաց ի Մոսկուա որդւոյ արքային խրեանց Վախթանկայ, Հերակլ արքայ քանիցս յետս պահանջեաց զայն, այլ արքայորդին և տուն նորա յանձն չսոին տալ. մինչև յամի 1801, թողնորդի Վախթանկայ Գէորգ արքայորդի ընծայեաց կայսեր Ռուսաց Աղէքսանդրի առաջնոյ. իսկ կայսրն հրամայեաց դարձուցանել ի Վիրս, ուր և պահպանի ի մայր եկեղեցւոյ Սղնիթու. ըստ այլոց աւանդութեան այս խաչ կապեալ միացեալ էր հետովք զիսոյ սրբոյ կուսին աստուածամօր Մարիամու, և ի նմանէ ի պարզելի մասին ընկապեալ էր սուրբն Նունեայ:

Ի ճանապարհորդութեան Քլափրութայ եղեալ կայ պատմութիւն Ս. Նունեայ առեալ ի պատմութենէ արքային Վրաց Վախթանկայ հինգերորդի, յորում երես 146, բանք են այսպիսի. «Յորժամ Վաթուղիկոսն ուսուցանէր սրբոյն Նունեայ զքրիստոնէական հաւատն, ասէ ցնաղուստր իմ, աչօք հոգւոյ տեսանեմ ի քեզ զօրութիւն որպէս զառիւծս՝ որ ահեղ է քան զամենայն կենդանիս, կամ արծուոյ՝ որ բարձրաթռիչն է քան զամենայն թռչունս. որ յերկրէ իւրեւ զմարգարիտ երևի փոքրիկ. բայց սրատես դուրով դիտէ ի բարձուստ զաւար իւր և խոյացեալ իջանէ ի վերայ նորա կատաղաբար»:

(51) Ըստ հաւաստի բանից մերոց պատմագրաց զգիրս Վրաց և Աղուանից եղիտ մերս Մեքորէք թարգմանիչն:

(52) Գլխաւորապէս զմիմայ ունի սրբ. միմայն:

Ս. Նունի ըստ օրինակի արքային Տրդատայ ծածկեցաւ յամբոխէ մարդկան և բնակեցաւ յանտառս. յաւուր միում տեսանէ ի տեղեան զքահանայ մի բուրվառ ի ձեռնն, և ի միջի ծխոյն խնկոց զհոգիս ընկերակցաց իւրոց, զորս կալեալ արքային Տրդատայ նահատակեալ էր, զի յերկնս ի վեր ընթանացին. աղաղակեաց յայնժամ սուրբն Նունի և ասէ. «Տէր, վասն էր մնացի ես յերկրի ի մէջ թունաւորաց», եկն առ նա ձայն յերկնց, «և զու յորժամ եկեացէ ժամանակ, փոխեցիս առ Աստուած քոյ. փշաբեր մացառք՝ որք ջրփակեն զքեզ, զայ ժամանակ զի վարդս բերցնեն անուշարորս, արի՛ և գնա՛ ի հիւսիս, ուր հունձք բազումք են, և մշակք սակաւք»:

Այս եկեղեցի սրբոյն Նունեայ՝ կառուցաւ ըստ ասոյց աւանդութեան ի չորրորդ դարու, ուր ամփոփին և ոսկերք նորա, արտաքին ձև շինութեան այսր եկեղեցւոյ միանգամայն տարբեր է ի ձևոց արեւելեան եկեղեցեաց, որք շինեալք են առհասարակ գմբեթաւորք, ի խորհրդաւոր միտս. իսկ այս եկեղեցի չունի գմբեթ, Տեսաք աստ զմի վարդապետ և զերիս քահանայս, առաջինն սիրով ընկալաւ էած զմեզ ի սենեակ իւր. առանձնական և անաշխատ կեանք սակաւ երբէք տան մարդոյ զքաղցրութիւն բնաւորութեան և զմարդասիրութիւն, որում մեքս հանդիպեցաք:

Այս մենաստան հարուստ էր յառաջագոյն և ունէր մինչև 1,200 շինականս, որք ընդ իշխանութեամբ էին վանուցս, իսկ այժմ՝ Սինօզի. և բաժանին ի չորս կարգս, առաջինն մճարէ ութն բուրլի, երկրորդն՝ վեց, երրորդն՝ չորս, և չորրորդն՝ երկու:

Նկամուտք քահանայից կողմանցս են յանդոց նոցին, իսկ ժողովուրդն մճարէ նոցա ըստ տանց 27 փուտ ցորեան, և երեք արբաս տեղական գրամ. բաց անտի՛ վասն քահանայագործութեանց, որպէս մկրտութեան, պսակի, թաղման ևն. տան որոշեալ կամ խօսեցեալ տուրս ինչ. օրինակի աղագաւ վասն վերջնոցն, առնուն յերկու բուրլոյց 910-ն. Աւինն սովորութիւն տալ և երիս հացկերոյթս ի պատիւ հանգուցելոյն. մի յաւուր թաղման, մի յետ եօթին, և մի ի տարեդարձին. յորս միշտ գտանին քահանայք. թէ

դէպ լինի օտար քահանայից գտանել յայսպիսի ծիսակատարութիւնս՝ առնուն և նոքա զերիս արբաս:

Աստի ի միւսում աւուր դարձեալ զուղին կալաք Տփլիսոյ, ուր կալով աւուրս ինչ ի հոգածութիւն պիտոյից ճանապարհորդութեան ի Հաստան և կարեւոր թղթոց, ի 22-ն Օգոստոսի յերեկոյն պահօւ ուղղեցաք զընթացս մեր դէպ յերևան. Յառաջ խաղացեալ եկաք ի Գարշանսերայ իջևան բոստի, ուր զմեզ ժամն երկուսարգել և պահեաց վնասեալ սայլակառն մեր, և ստիպեցաք տալ ի կարկատել. Չառաջեալ իջևանին անկանի դիւղ Հայոց. բնակիչք նորա 32 ամօք յառաջ գաղթեալ եկին ի Պարսկաստանէ ի ժամանակս կուսակալութեան Տիցիանով իշխանին. և պարսպին երկրագործութեամբ:

Հանդիպեցաւ ինձ աստանօր ծառայող ոմն դատարանին Գանձակայ, որ ետ ինձ տեղեկութիւնս զկողմանցն այնոցիկ. և ես ի մէջ բերեմ աստանօր — Բնակիչք գաւառին Գանձակայ են Հայք և Թաթարք. Հայք բնակին ի լերինս և Թուրքք յարգաւանդ տեղիս դաշտաց. առաջինքն պարսպին զլիւսւորապէս երկրագործութեամբ և այգեգործութեամբ. սերմանեն ցորեան, գարի, կորեակ, եղիպտոցորեան, և մուշ. վերջինքն՝ տուարածութեամբ՝ որք և մեծաւ մասամբ հարուստք են, այլ ծոյլք իսկ Հայք ընդհակառակն յոյժ աշխատասէրք. զիւղորոյք թուրքաց բազմաբնակք են, իսկ Հայոցն անկաւատուրք. տունք առաջնոցն՝ նմանին տանց Վրացւոց, երեւի զի ազգ մի ի միսոյն իցէ՝ առեալ զձև շինութեանն, զայսպիսի տունս մարթ է անուանել ստորերկրեայ այրս:

Յարբունի դիւղս, հոգն սեպհականութիւն է տէրութեան, իսկ շինուածք, ծառաստան և այգիք՝ բնակչաց. իւրաքանչիւր տան որոշեալ է բաժին հողոյ. և տիրապետողք նոցին կարեն գնել կամ փոխել միայն ի մէջ համաշինիցն իւրեանց, և եթէ անգամք միոյ գերզաստանի Վահմետականաց կամիցին, կարեն բաժանել զկայուածս իւրեանց, այլ ի ձեռն Շարիաթ - չերի, (հոգեւոր դատարան Վահմետականաց). որոյ ատենապետն առ Սուննիս Ղազի անուանի, առ Շիայս՝ Ախունդ. Յիսուն զիւղից է միայն մի Ախունդ. Շարիաթ - չերն բա-

ժանէ զինչս կամ զկալուածս համաձայն արդարութեան, իրր զի աշխատաւորն ի նոսա առնու գտուն, այլք զմասն հողոյ կամ խաշինս կամ դրամ. հայրն կամ եղբայրն առ սոսա վաճառէ զաղջինն տան, (այս ինքն յամուսնացուցանելն առնու ի փեսայէն գումար ինչ, կամ խաշինս, օթոցս, և այլ իրս). եթէ հայրն չունի արու զաւակունս, դստերք ժառանգին զնա. եթէ հայրն բաժանեցի յորդուց, յետ մահու նորա դուստրն առնու զժառանգութիւնն, իսկ թէ անբաժանք իցեն՝ առնու բաժին միայն ի շարժական գոյից. իսկ անշարժք ուստերացն են. Առ Թաթարս են ազնուական ցեղք անուամբս Բէկ. գրեա թէ յիւրաքանչիւրում աւան գտանին տունք բնկաց. սոցա էր գործ յառաջ դատել զժողովուրդն, ժողովել զարքունի հարկ, և լն. և ժողովուրդն պարտաւոր էր մի մի աւուրք ծառայել նոցա ձրի, ի հերկել զերկիր նոցա, ի հնձել և կասել. Ի 1841 ամէ հետէ կարգեցան ի զիւղորայս զյխաւորք (քեախուտա) և օգնական նոցին յերկուց մինչև ցհինգ համբա կամ ագսադկալ. վերջինքն յառաջ ընդ իշխանութեամբ էին առաջնոց, իսկ այժմ անկախ ի նոցունց իշխանութենէ, բայց և բնկք ազատք ի նոցանէ:

Հայոց ազնուական տոհմք են մելիք. չունին սոքա ամենեկին արտօնութիւնս. չառնուն թոշակ ոչ յարքունուստ, և ոչ ի ժողովուրդոց, միայն ազատք են ի հարկաց, որպէս և բէկք իսկ. որ ինչ վերաբերի ի ներքին կառավարութիւն Հայոց տեղւոյս, իմա զնոյն, զոր ասացաք ի վեր անդր զԹուրքաց, Հայք և Թաթարք գործեն շալս և օթոցս:

Անտի ի Քարվանսարայէ չափեալ զուղի հասաք ի լիճն անուանեալ «Գեօք չայ», (կապոյտ գետ, ծով), որոյ շրջապատն է չորից աւուրց ճանապարհ. ի մէջ լճիս է կառուցեալ մենաստանն Հայոց Սեփանափանք կոչեցեալ. յորում բնակին՝ արքեպիսկոպոս Հայոց և քսան միանձունք, որք ոչ հպատակն Կաթուղիկոսին Էջմիածնի 32). Առ լճաւս որպէս յիշէ Դիւբուայ, զոյ եկեղեցի՝

(52) Ուստի՝ առեալ կարգէ արդոյ հեղինակն զայս ինքնիշխանութիւն միանձանց Սեփանայ, մեզ չէ յայտ:

վայելչակիրտ՝ շինուած մետասաններորդ դարու. ի վերայ դրան նորա գտանի այսպիսի արձանագրութիւն «Ի 1033 ամի ի թագաւորութեան Սաղիկայ և ի պատրիարքութեան Սարգսի, ես Գրիգոր Մարգիստրոս օրդի Հասանայ շինեցի զայս եկեղեցի բարկիսօս վասն իմ, վասն մօրն իմոյ և որդւոյս. աղաչեմ զամենեանն, որք ընթեռնուն զսա, աղութել առ Փրկիչն վասն մեղուցեղոյս»:

Ամենայն արեւելեան եկեղեցիք համաձայն վարչապետութեան Հռովմէականին հաւատան ի բարեխօսութիւն սրբուհւոյ Աստուածածնին և սրբոց, որպէս վասն կենդանեաց, նոյնպէս և վասն մեռելոց ի քաւարանի 53). և այս յայտնի տեսանի յանհամար արձանագրութեանց եկեղեցեաց և մահարձանաց Վրաց և Հայոց. բաց աստի ի վերոյիշեալ արձանագրութենէն տեսանի թէ՛ և Աստուածահաճոյ գործք, ընկալեալք են ի սոսա իրիւ միջոցք քաւութեան մեղաց. զօ. են շինութիւնք եկեղեցեաց և լն:

Պետրոս Նեյ, գիտակ ամենայն աւանդութեանց երկրին, ի տեսանել զլիճն Սեփանայ պատմեաց ինձ զհետագայդ աւանդութիւն ի վերայ Լանկութեամբայ:

Թամեր կամ Թամուր ի մանկութեանն էր հովիւ խաշանց. դէպ եղև երեւի ի մեջ հօտին նապաստակի միոյ. Թամուր գառն կարծելով զայն՝ յորժամ կամէր փախլել, զառաջս կալիալ միշտ ընդ խաշանցն բերէր մօւծանէր ի փարախն. յաւուր միում տրտունջ երարձ հօրն զանդորր բնաւորութենէ զառին, որոյ գիտացեալ զինչ է այն, և զարմացեալ ընդ արագավազութիւն որդւոյն իւրոյ, ասէ. «Թէ կանուխ թէ անագան ընդ բռնամբ նուաճելոց ես դու զաշխարհ և կործանելոց զուխտ կրօնաւորաց. այլ որպէս զի մի՛ զբովանդակ երկրագունդն ունիցիս քեզ և յաւեր զամենայն տեղիս զարձուացես, բառնամ ի քէն զարագընթացութիւնդ», և եհատ զջիւ միոյ ռոտին

(53) Եկեղեցի Հայոց ամենեկին յիստատիւնի և շրջունեցեալ արան. մեք չկամիմք աստանօր երկարել զքանս մեք վասն այդ, իսկ թէ ընթերցող, դու ցանկացես, առաջի առնեմք քեզ զգիրս աստուածաբան հարց և հոգեբանք վարդապետաց Եկեղեցւոյ Մերոյ սրբոյ:

նորա, յայնմ օրէ կաղացաւ մանուկն, որ վասն կոչեցաւ Լանկ-Թամուր. (կաղ Թամուր). Բայց իրիւ աճեաց և զօրացաւ, ստացաւ արիութիւն քաջութեան և սիրտ անվեհեր. եկաց զլուխ ցեղին իւրոյ, և ետ ի մտի զբռամբ ածել զաշխարհ, ուստի առեալ 12,000 անձինս խաղաց գնաց ի վերայ Թագաւորին 2ինաց, որ բնակէր ի մէջ ամբողջի միոյ, կղզիացելոյ ի ծովու. Սմա յիւրաքանչիւրում աւուր բերէին խորտիկս յոսկի ափսէս, և յետ կերակրոյն զափսէսն ի ծով ընկնելուն յամենայն աւուր. դիտացեալ զգալուստ Թամուրայ՝ հրամայեաց հաւաքել յամենայն տեղիաց տէրութեան իւրոյ, 12,000 կաղս. և հեծուցեալ զնոսա 912,000 կաղ ձիս, առաքեաց ընդ դէմ նորա, ընդ նմին և ոսկի ափսէ ծածկեալ, զի ցուցէ զփառս անսահման ճոխութեան և մեծութեան իւրոյ. իրիւ երաց Թամուր զափսէն, եղիտ լցեալ ակամբք և ոսկուով. յայնժամ ասէ ցարսն. «ասացէք ցԹագաւորն, ես նօթի եմ, և ինքն ինձ յղէ ոսկի և քարինս», և Թագաւորն ասէ «ընդէր եկիր. ունէիր զի՞նչ ուտել ի տան քում, ապա ուրեմն կարօտ ես ոսկոյ և քարանց. առ աւանիկ, որչափ կամիս», Թամուր յետս դարձաւ, և անցեալ ընդ Պարսս եկն ի Հայաստան. և իրիւ մեծ թշնամի քրիստոնէութեան ետ ի մտի երթալ, աւերել, կործանել զեկեղեցիս և զվանորայս. դիմէ գնայ ի Գեղարդավանք. այլ հասեալ յեղը գետոյն տեսանէ ի միւսում կողմանն զօրս անթիւ բազմութեամբ, զօրս ինքն միայն նկատեալ ցուցանէ զօրաց իւրոց, և գիտացեալ թէ երկինք ընդ դէմ դիմեն նմա՝ աղաղակեաց, եւ թէ (երթ ի բաց). ուստի մնաց անուն վանիցն ի Թաթարաց Եօլ — գէշ. Դարձ արարեալ անտի դիմեաց ի վերայ Սեանայ վանից, և ոստանօր տեսեալ կրօնաւոր ոմն՝ որոյ արկեալ զփլոնն ի վերայ ջուրց գնայր անվտանգ, պակեաւ ի հրաշիցն, և կոչեալ առ ինքն գնա պատուիրեաց օրհնել զզօրս իւր՝ և ասէ. «ինչորեա ինէն զի՞նչ և կամիս, լուայց բեղ», յայնժամ կրօնաւորն խնդրեաց զի որչափ գերիք գետեղեցիցն ի փոքրիկ տաճարի վանիցն, արձակեալ լիցին. էին ի մէջ զօրաց նորա անհամար գերիք և ամենեքին զետեղեցան ի տաճարին, վասն

որոյ ազատս կացոյց զնոսա. իսկ կրօնաւորն փոխանակ օրհնութեան գրեաց և ետ նմա անէծս զի մի՛ առաւել քան զտասն այր հնազանդեցին և կացցեն ընդ ձեռամբ նորա. և յայնմ օրէ ցրուեցան զօրք Լանկթամուրայ — Ի նմանէ յառաջ եկեալ են և Լեկզիք, յորս չէ մարթ բնաւ տեսնել առաւել քան զտասն այր թէ միաբանեցին և իցեն ընդ միոյ իշխանութեամբ 54):

Փոքր առ փոքր յառաջ խաղացեալ ելանէ մարդ ի բարձրութիւնս լեռանց. և քանի մի ժամու ճանապարհաւ հեռացեալ ի Սեանայ տեսանէ զգաթ Արարատայ զարդարեալ ի նշուլից շքնաղ արիւնջն. Այրարատ ունի 16,000 ոտնաչափ բարձրութիւն յերեսաց ծովու, ուստի և բարձր քան զամենայն լեռինս, զորս ես տեսի, Ելբորուս քանի մի հազար ոտնաչափ բարձր է թէև, այլ ըստ որում ի շղթայից Պովկասեան լեռանց ձեանայ, ոչ այնչափ զարմանալի. իսկ Այրարատ առանձնացեալ մեկուսացեալ ի մէջ ընդարձակ դաշտի, և սպիտակափայլ յարատե արեօքն պանծալի, ազգէ ի մեղ յարգութիւն և ահաւորութիւն. Սեանգութիւնք ազգաց համաձայնին յընդունել նորա ի զլուխ իւր զնոյեան տապան *):

Յետ քանի մի ժամու մուտ կալոք յԵրեան, իջեան կալեալ ի տան Պ. Աբովանի, որ էր կառավարիչ (տիրիքսոր) նորակառոյց արքունի զրպրոցին. Երեան է միանգամայն Ասիական քաղաք՝ թէև քանի մի արքունի նորաշէն տուլք են ըստ Եւրոպական ախորժի. Երիվան, կամ որ ուղիղն

(54) Մի գուցէ ընդ նոյն օրինակ անթիւք ենթադրեալ է ազգ մեր, զի կարօտ մնացաք տեսնել զոնէ հինգ կամ վեց անէին ի մի միաբանիլ յազգօգուտ և յընգհնարաւոր խորհուրդքս բանս և ի դարձս, որով և ոչ այսպիսով վիճակեաց որոշուելէ դրութեան:

(*) Մեծ պատմաբանն Հայոց Մովսէս Խորենացի անուանէ զԱրարատ ու միւրոց աշխարհիս ուրպէս և Հայաստան երկրին. Բիշդէք հաս. Ժ. յառաջ բերէ զբանս Բաւմբուրայ և Գոֆայ, որք հաստատեն թէ արդարեւ Արարատ ունի զկեղծականէ քինն աշխարհի դերս, նոյն զի կեղծոն է մեծի տարածութեան որ ի հրուանդանէն Բարեյուսոյ ցնեղուցն Պեհրիկայ. Բ. դրութեան Ասիա — Աֆրիկեան անապատաց. Գ. զուգահեռաւոր ընթացից միլիարդական շուրջ ի ձիւրաղաբայց ցլծն Բայքաւ. և Դ. քան զայլ լեռինս առաւել յարմարագոյն

է Երևան, ի Հայ լիզու նշանակէ տեսանին, Աւանդութիւնն ասէ թէ՛ յորժամ՝ նոյ յետ ջրհեղեղին ի լեռնէն Հայեցաւ տեսանել զգամար, ետես զայս տեղի և ազաղակեաց և Երևի, և աստի տեղիս էառ զայս անուն*)։ Ըստ այլոց աւանդութեան՝ Երուանդ արքայ Հայոց Հիմնեաց զայս քաղաք։ Երևան ունի և զայլ անուանս որպէս Անց—Վային, Շաղաթ, Դվին, Արմօվին, և Արտակաստոյ 55)։ Աստ Հանդիպեցաւ Աննիբաղ Տիգրանայ։

միջովայր, շրջապատեցն զեռ լուրջ։ Բազում են սրբազան աւանդութիւնք Հրէէց և Պարսից զԱրարատայ և զաշխարհէս։ յԱրարատայ էին Ռիլեամ, գիտակ աստղագիտականութեան և դարձեալ առ կողման Արարատայ կամ ի վերայ փոքուն Արարատայ գտանիր աստղօրինակ սիւն, առ որով կացուցին Քաղդէացիք զերկրաւոր իմաստունս զէտ ունել յայտնութեան աստեղն յերկինս։ Երեքն ի նոցունց նշմարեալ զայն, նորուն աւանդութեամբ եկին ի Հրէաստան, ցտեղի ծննդեան Յիսուսի Քրիստոսի։ Արարատ էր կեզրուն աստղաբաշխութեան Քաղդէացոց։ Բեզաբ, (Աշխարհ, հաս. Ժ. Գիրք Գ. եր. 275) զնէ թէ Հայք անուանեն զԱրարատ, Աշերդաշ, զաշեր զաշ։ Ինձ հաւանական է գրել որպէս և Համմեր, Արիտաշ, (լեռան տալանի)։ արիւ, Լատինական է Թերեա արկայ, յորմէ և Գերմաներէնն արշ, և արկ. ի Հնդկաց լեզու նշանակէ նաւ, (Թերեա և Αρρο Αρροναστη)։

Հեղինակն։

(*) Յամենայն ուրեք յայտնիկ կողմանս բունք են զնշէ. Պարսիկք անուանեն զԱրարատ ու Վուշի - Նուշ - Ա (լեռան Նոյն)։ Հայք, Մաթիս, այս ինքն մայր աշխարհի, երկիր, որ առ Արեւելեան ոտիք յերկին ասի Առնոյտուն. վասն զի աստ զառաքին միեկեան յերկիր ոտք նորա, գիւղն, Ակուսի, այս ինքն Արկ - ուսի, ուր տնկեաց զորթ խաղողոյ, զերեւալն ընդ իւր յառաջնայ աշխարհէն. աւանդի թէ որթք խաղողոյ տեսանին մինչ ցարք, ըսյց ոչ բերեն պտուղ սակս անօրէնութեան մարդկան և ի տեղւոյ, ուր սեղանն էր Նոյի, հիմնեալ է և փեղեցի. քաղաքն Նախիվեան, նշանակէ տեղի առաքին իլեանելոյն Նոյի. փլախիառն Յովսէփ անուանէ զնտ Արապատորիւմ, Մարանդ, մայր - անդ. այս ինքն կին Նոյի։

Բոյսրբոք ճանապարհորդն 1253 ամի զնէ թէ, ոչ ոք կարէ ելանել ի գլուխ Մասեաց. և Յակովբ Մօքանայ Հայրապետն յետ պատարագին խնդրուածոցն չկարացեալ ելանել, էառ մասն ինչ տապանին, որ պահպանի յարգանք ընդ մասունս սրբոց. զեւանելն Պարոտայ ի գլուխ Մասեաց լեռնեանդ մասն Հայոց սուտ վարկանէ, իսկ խոհականքն ի նոցանէ ասեն, թէ հաւանական է ելանելն, ըսյց ոչ եկաց նա ի քալիս լեռն, այլ ի վերայ ձեանն և ասին, հեռի ի տապանէն։

Հեղինակն

(55) Զայսպիտի տնուանս ուստի՞ յարմարեաց Հեղինակն Երեւանայ, չէ յայտ. զայս միայն մնայ մեզ ասել թէ ուսեալ Եւ-

Ջօրն ողջոյն զառաջինն, անցուցի շրջելով ի քաղաքն։ Հետաքրքրական քան զամենայն ինչ է վաճառանոցն. ուր ամենայն արհեստաւորք աշխատեն ի կրդակս և զանազան իրաց վաճառողք բնակին ի միասին. գրիթէ իւրաքանչիւր որ ի նոցանէ ունէր ի ձեռին կիրթ բազէ մի, որով անցուցանէր զժամանակս իւր։ Յարեւելեան քաղաքս կեդրոն Հաղորդակցութեան միմեանց և ընկերական կենցաղավարութեան են վաճառանոցք. զի ի տունս ժողովել և ժամանակս անցուցանել յայնժամ է միայն, յորժամ լինին ուրախութիւնք, զոր օրինակ Հարսանեաց և այլն, Ընկերակցութեամբ Արովիանի և քաղաքապետին դիտեցի առուակս և եղանակս ոռոգանելոյ զերկիր. թէ և ցաւիմք, զի կարճ միջոցս կացեալ յայտնօրիկ կողմանս, չկարացի որպէս կամ էր ինձ քննել և զիտել զայս երևելի առարկայ։ Երես դաշտիս երկայնելոյ ընդ մէջ Արարատայ և լեռանցն անկիւղ ի Հիւսիս ծածկեալ է լավայիւ, սեւակճիւ, և տեսակ ինչ քարամբք, և ամենեքին սոքա հետք են հրաբղխաց. ի հրաբղխային զօրութենէ է, զի սեւահող երկրիս է ջերմ, ջոր, բայց ըստ ինքեան յոյժ արգասաւոր, եթէ ոռոգանեն զնոսա. առանց ջրոյ և ոչինչ բուսանի ի նմա, զի ամօք չտեսանի անձրեւ, յորմէ յառաջ զայ տօթ անտանելի և չորութիւն երկրի. և երկիրս այս, զիւրաւ կարէր անմարդանալ, եթէ չլինէին առուք և ջրանցք. որք երևին յառաջ եկեալք յամենահին ժամանակաց անտի յաւուրս ինքնակալութեանց մեծամեծաց արեւմտեան Ասիոյ. զի թէպէտ պատմութիւնն լուէ, այլ եթէ ի նկատի կալցուք թէ այս երկիր, բացառութեամբ քանի մի կողմանց, առանց ոռոգման չկարէ մատակարարել բնակչաց սնունդս, և որպէս պատմութիւնն յայտ առնէ՝ երկուց կամ երեք հազար ամօք յառաջ այս երկիր տասնապատիկ առաւել բազմամարդ և բարգաւաճ էր քան

բոլորային այլեան անգիտացաւ, մինչ զի զանաւանքս Գիւն, և Արմեւին, և Արտաքսատայ (զու կարգա վերին երկուքս. Արմաւիր, և Արտաշատ) շքեղ մայրաքաղաքաց Հայոց, տարեալ ընծայէ Երևանայ, ընդ նոսին և անունս Դաղաթ որ է Գիւղ ինչ աշխարհին Սիւնեաց, իսկ Անց - Վաղէն անժամօթ տունն է. ուստի և զժուարանալք ասել ինչ։

այժմ, ուրեմն չկարէին առանց ջրանցից և առուաց մշակել զերկիր, իսկ ի հաստատուել և ի գլուխ տանել զսոյսչափ բազմաթիւ ջրանցս և առուս, պահանջէին ընդ երկար համբերութիւն, և մեծազօր իշխանութիւն *):

(Շ-բ-ն-ն-ի-է-է)

ԱՐԻՍՏԱՆԷՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՍԵՂՐԱՅԵԱՆ.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՍՈՋՐՆԱԿԱՆ ԲԱՅՈՒՄՆԵՐԻՆ ԲՆԱԿԱՆ ԵՐԵՎԱՆԻՆ

(Շ-բ-ն-ն-ի-է-է)

Ի

ՉԳ-ը-ն-ի-է-է.

Ոնկէ խցանից երկու գնտակ շինենք և ձգենք ջրով լեքը ամանի մէջ: Աոցա շարժելու ժամանակ մենք երկու երեւոյթ կը տեսնենք: Առաջին երեւոյթը կը լինի հետեւեալը: Երբ որ սկսենք գնտակներէց մէկը շարժել, միւս գնտակէն մօտիկ տեղից, մենք կը տեսնենք որ այս վերջին զնտակը, կսկսի լողալ առաջինի ետեւից: Իսկ եթէ երկրորդն գնտակները մօտեցնենք միմեանց և իսկոյն յետ քաշենք ձեռքներս, նոքա իսկոյն կը միանան միմեանց հետ և կսկսեն միասին լողալ: Երկրորդ երեւոյթը այն է, որ գնտակները փոքր առ փոքր կսկսեն մօտականալ ամանի կողքերէն:

(*) Եղլը, որ նախապարտորդեաց ի հայաստան Թուրքիոյ, ետեւ մեծ ջրանց շինեալ համակ ի վիմարդ քարանց, ուստի լուր տէրն ի վան քաղաք. ժողովրդական աւանդութիւնն Եամիրամայ տայր ցայն:

Եթէ ջրով լեքը բաժակի մէջ ձգենք մի կտոր շաքար, ջրի երեսին կերէին օդի պղպշակներ: Այդ պղպշակները կը ձգտին միանալ միմեանց հետ: Եւ նոքա բոլորեքեան կսկսին շարժիլ դէպի բաժակի որմունքը, և երբ որ փոքր ինչ մօտենան, այն տեղից աւելի արագութեամբ կը կըպչին բաժակի որմերին:

Այս երկու օրինակից մենք տեսնում ենք, որ մի քարշող զօրութիւն կայ և նա է, որ հարկադրում է գնտակներին և բըշտիկներին մօտենալ միմեանց: Այդ զօրութիւնը անուանվում է յփոդ-ն-ի-է-է:

Հապա ինչու համար երկրի երեսին չենք տեսնում այսպիսի ձգողութիւն, ինչպէս վերեւ բերուած փորձերի մէջ տեսնում ենք: Վորա պատճառն այն է, որ երկրի մակերևոյթի անհարթութիւնը արգելում է մարմիններին միմեանցից մօտենալու: Այս մի և նոյն պատճառն է նոյնպէս արգիւք լինում ձգողութեանը, եթէ մարմինները զանվում են սկզանի կամ դորա նման մի այլ բանի վերայ:

Որքան որ մարմինը մեծ լինի, նա այնքան աւելի ձգողութիւն կունենայ: Այդ հատկանալի է: Երկու հաւասարաչափ սնկէ գնտակները հաւասարաչափ ձգողութիւն են ցոյց տալիս դէպի միմեանց: Բայց եթէ մէկը միւսից մեծ է, բնականաբար այդ մեծը աւելի շուտ կը քարշէ փոքրին դէպի ինքը, պատճառ նորա մէջ շատ մոսներ կան, որոնցից ամէն մէկը երեւցնում է ձգողութիւն: Այսպէս, օրինակ, երբ որ քարը շարժում ենք դէպ ի վեր, նա ինչու է վայր ընկնում երկրի վերայ: Փայտը, թուղթը և բմբուլը նոյնպէս վայր են ընկնում, եթէ մի այլ բան չի բռնում նը-